

ՔՐԻՍՏՈՍԻԱՆ ՎԵՐՈՒՆՈՒՄ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)
Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնները համար վճարում են
խրախուսիչ րաւին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՆՈՒՄ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՑ 1898 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻՑ ՄՇԱԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՑԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱԶՈՐԻ
ՕՐԵՐԻՑ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:
«ՄՇԱԿ»-ը գրվել կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բաղարայան և Բարսեղյան փողոցների անկիւն):

ԲՈՒՄԱՆԳՈՒԹԻՒՆ

Հին ժառանգութեան արձագանքները. Օրէնք թէ սովորութիւն. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հաւոյ թատրոն. Նամակ Բաթումից. Նամակներ Խաղաղութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏՈՒՄԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Յունաստան. Նամակ Թիֆլիսից. Նամակ Ամերիկայից. Նամակ Պարսկաստանից. — ԽԱՆԻՆ ԼՈՒԿԱՆ. ՀԵՆՈՒԿԱՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Պարբերական պատկերասրահ»

ՀԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Նաո միթարական է արձանագրել, որ «Гражданинъ», լրագրի նման մի պահպանողական օրգան, որ շատ անգամ խրախուսել է ամեն տեսակ յարձակումներ ռուս ազատամիտների և առաջադիմականների դէմ, ջերմ պաշտպան է հանդիսանում խղճի ազատութեան և քարոզում է համբերողութիւն դէպի ազգութիւնները և կրօնները: Նա մեծ և փառաբանող սխալ է համարում այն արշաւանքը, որ սկսվել է Ռուսաստանի մի քանի շրջաններում դէպի օտարազաւան և օտարացեղ տարրերը: Լրագիրը եռանդուն կերպով բողոքում է մահաւանդ այն մարդկանց դէմ, որոնք աշխատում են իրանց անհամբերողութիւնը հեղինակաւոր վիպութիւններով արդարացնել և անխարկում են հանդուգնաւ Ալեքսանդր III Կայսրի հայեացքների վրա: «Гражданинъ» ամենակտրական կերպով

յայտնում է, որ հանդուգնաւ Կայսրը լայն հայեացք ունէր կրօնների ազատութեան մասին: «Ձր թոյլատրելով, որ ուղղափառ եկեղեցին և ռուս ազգութիւնը ստորացնէին և վերադարձնէին ինքնակրօնը, Կայսրը մի և նոյն ժամանակ չէր թոյլ տալիս այն միաբնդ, թէ ռուսաց եկեղեցին և ազգութիւնը իրանց ոյժի համար կարօտութիւն են զգում, որ միւս եկեղեցիները և ազգութիւնները ճնշվեն: Կայսրը մի անգամ ասաց. «Նա յարգում եմ ամեն մի կարծիք, երբ նա անկեղծ է, թէկուզ նա համաձայն չը լինէր իմ կարծիքի հետ. բայց ես չեմ յարգում այն կարծիքները, որոնք դեպքօտական են դէպի ուրիշները»:
Նոյն արդարացի և համակրելի հայեացքներին պաշտպան է ռուսաց պահպանողական մամուլի մի ուրիշ օրգան՝ «С. Петербургскія Вѣдомосты», որ նուիրել է կրօնի և ազգութիւնների ազատութեան խնդրին մի քանի նշանաւոր յօդուածներ և աշխատել է ապացուցանել, որ միայն այդ կերպով կարելի է ամուր կապել մեծ պետութեան մէջ ապրող բազմաթիւ ազգութիւններին և զանազան կրօնները դաւանողներին միմեանց հետ մի ընդհանուր համարաշխ քաղաքացիական գործունէութեան համար:
Մենք յատկապէս կանգ ենք առնում պահպանողական օրգանների կարծիքների վրա, որովհետեւ միայն պահպանողական

ները շարքերից են լսվում կրճատելու, սահմանափակելու առաջարկութիւնները, և այդպիսի կարծիքներ համարվում են խիստ հայրենասիրական զգացմունքի իբրեւ ամենալաւ արտայայտութիւն: Ազատամիտների համար համբերողութեան սկզբունքի դաւանելը — տարրական սկզբունքները մէկն էր, որի մասին ոչ մի վէճ, ոչ մի կասկած չէր կարող երբէք յարուցվել: Բայց երբ պահպանողականների շրջաններում ըսկսվում է կամաց կամաց պարզվել անհամբերողութեան վնասակարութիւնը, այդ նշանակում է, որ կենսելը այլ ևս անկարող է տանել այն անպատեհութիւնները, որ առաջ են գալիս զանազան անհիմնաւոր կարգադրութիւններից և ստացվում են այնպիսի տխուր հետեւանքներ, որոնք այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում, որ գործվել են մեծ սխալներ: Դժբաղդաբար, մի և նոյն փորձերը ճակատագրական նմանողութեամբ կրկնվում են ամեն տեղ և անցեալի փաստերը ուսանելի ու համոզեցուցիչ չեն դառնում նորերի համար: Ամենքը կրկնում են մի և նոյն սխալները կարծես միայն նրա համար, որ հազար և մի երրորդ անգամ էլ համոզելու բոլորին, որ ազգային և կրօնական անհամբերողութիւնը մարդկային փոխադաւոր մարդութիւններից մէկն է և շատ վնասակար իր տխուր հետեւանքներով:

ՕՐԷՆՔ ԹԷ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Վաթնականութեան մարդասեր և բարեբար ընթերցանելի շնորհիւ Ռուսաստանի գիւղական ազգաբնակչութիւնը, կարելի է ասել, առաջին անգամ ստացաւ մարդկային իրաւունքներ և ուղիղ քաղաքացիական կեանքի մէջ: Նա սակայն ռուսաց օրէնսդրութիւնը, մշակելով և սահմանելով քաղաքացիական, քաղաքացիական, քաղաքացիական օրէնքներ քաղաքացիների համար, ճշգրտութեամբ որոշելով նրանց փոխադարձ յարաբերութիւնները և իրաւունքները, թողել էր մինչև այժմ գիւղական ազգաբնակչութիւնը առանց ընդհանուր քաղաքացիական և քրէական օրէնքների: Նա այդ պատճառով, գիւղական կեանքը իր փոխադարձ յարաբերութիւնների մէջ, շատ տեղ և շատ անգամ վեկավարվում է մինչև

չև այժմ ոչ թէ որոշ, հաստատ օրէնքներով, այլ տեղական սովորութիւններով: Ների հիման վրա: Գիւղացիների վիճակը հիմնական է ոչ թէ օրէնքի, այլ սովորութեան վրա, նրանց իրաւունքները որոշողը, նրանց համար պարտաւորութիւնները սահմանողը ոչ թէ ընդհանուր քաղաքացիական օրէնքն է, այլ տեղական սովորութիւնները: Նրանց հիմնական կարգը: Նա ներկայումս երբ կառավարութիւնը արդէն ձեռնարկել է, յատուկ մասնաժողովի ձեռքով, քննել գիւղացիների համար գոյութիւն ունեցող կարգադրութիւնները, մասնաւոր օրէնքները և մշակել մի նոր կանոնադրութիւն գիւղական ազգաբնակչութեան համար, հրաւիրելով խորհրդակցութեան և գիւղական կեանքին մօտ ծանօթ անձանց, նորից կառավարական շրջաններում և թէ՛ մամուլի մէջ յարուցվել է հին հարցը. — օր է՞նք թէ սովորութիւն:

Օրէնքներով պէտք է ղեկավարվի գիւղական կեանքը, թէ սովորութիւններով. այս հարցը դրված է ներկայումս հրապարակի վրա և նրա լուծումից է կախված կայսրութեան ազգաբնակչութեան մեծագոյն մասի ապագայ վիճակը և բախտը: Նրա լուծումից է կախված և այն եղրակացուցութիւնը, որին կը գայ յատուկ յանձնաժողովը: Հին կարգի կողմնակիցները, «սովորութեան իրաւունք» պաշտպանները առաջարկում են թողնել, որ գիւղացին կառավարվի իր սովորութիւններով, ինչպէս կառավարվել է մինչև այժմ, որ նա իր ներքին գործերը մասնաւոր, ընտանեկան, դրացիական և այլ յարաբերութիւնները վարէ իր աւանդական սովորութիւնների հիման վրա. այդ կարծիքը պաշտպանները, իբրեւ ապացոյց, առաջ են բերում այն հանգամանքը, որ շատ դժուար է կանոնաւորել, այսինքն որոշ սահմանների և կանոնների ենթարկել գիւղական կեանքը, ուստի և պէտք է գիւղացու վրա նայել իբրեւ մի առանձին դատակարարի մէջ և թոյլ տալ նրան կառավարվել իր սեփական օրէնքներով. — աւանդական սովորութիւններով:

Դժուար չէ նկատել, թէ որքան անհիմն է այդ առաջարկութիւնը: Նա շատ իրաւացի է բողոքում Պետերբուրգի մի լրագիր, երբ ասում է. «Նույն վրա է հիմնված գիւղացիների այդ առանձնակի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՊԱՐԻՋԻ ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼԸ»
(Եփե Զօլա)

Ազատութեան, հասարակութեան և եղբայրութեան սիրուն հայրենիք՝ Պարիսիւն, դատապարտում է այսօր՝ դարի վերջալստին, իր մեծ դավալին 3000 ֆրանկ տուգանքի և մի տարի բանտարկութեան, աշխարհի առաջ: Ճշմարտութիւնը պարտութիւն է կրում ուժից: Անկեղծութեան փրկած գահի վերադարձի կողմէն է իր դաժն հաստատում: Զօլան յաղթված է: Նրա շուրջը տղէտ ամբողջ կատաղի սրտապրոց յետոյ, այժմ դիւստի քրքիջ է բարձրացրել: Իսկ երկրամասերի իր անարժան բերանով մեծ դատարարների հայտնեց յետոյ, իրէպնեքի դադարի վրայից անաւօթաբար ծափահարում է անարարութեան սև յաղթանակը: Տխուր է Զօլան, մտալով ամպերով պայծառ ճակատը վարագործած, վերաւոր սրտով նայում է ամբարիւն և ներքում, նայում է սիրած հայրենիքի դուստրոգ բոջ ծանոթահոտ ծաղիկներին և լալիս. լալիս է նրա հետ և սրտացաւ մարդկութիւնը: Զօլան յաղթվելը: Մութը ջախջախեց զրէին:

Բայց ով է Զօլան, ով է «Պարիսի դատապարտաւոր», այդ յանդուգն մարդը: Թողնեք, որ դրան պատասխան իր հանձնարել աշակերտ

դժբաղդ Վիլլ Մօպսանը, որը հոգեբանական այնքան սուր դիտողութեամբ դեռ շատ վաղ ճանաչեց մեծ ուսուցչի սիրտն ու հոգին: Բայց թողնելով այն բոլորը, ինչ Մօպսանը ասել է *) Զօլայի գրականական տաղանդի, ուղղութեան, գործունէութեան, և նրա մասնաւոր կեանքի ընթացքի մասին, առաջ ենք բերում այն բոլորը, որ Զօլան ոչ թէ իբրեւ բանաստեղծ-գրող, այլ իբրեւ ստեղծական մարդ է ներկայացված, մի բան, որ ամենահետադրեղբայրական ու կարեւորն է ներկայ պատմական մոմէնտի համար: Մօպսանը գրում է՝

«Զօլա Սա այն անուններիցն է, որ թուում է թէ փառքը նրանց համար է սահմանված, որոնք յիշողութեան մէջ հնչում են ու բանասիրելու: Կարող է մարդ մի Բալզակի, մի Միւսէ, Հիւգօ մոռանալ, երբ մի անգամ այս կարճ և քաղցրահնչիւն անունները լսել է: Բայց գրականական բոլոր անունների մէջ թերեւ չը կայ մէկը, որ այնքան պարզ հնչէ մարդու ականջներին և յիշողութեան մէջ, այնքան ուժեղ տպւորւով, ինչպէս Զօլան: Նրկու պարզ հնչիւններ. — Զօլա: Ինչպիսի հեշտակ հասարակութեան մէջ: Սա երբ ջանկարութիւն չէ մի շնորհալի գրողի համար, ծննդեան օրից մի այդպիսի անունով օժտված լինել: Նա միթէ երբ և իցէ մի անուն այդքան գեղեցիկ և յարմար է եկել մարդուն: Նա հնչում է ինչպէս կուէի աղաղակ, ինչպէս պաշարման սկզբում, որից և քաղում ենք:

Նա ինչպէս գլորեցնող յաղթութեան ջոկնը: Սակայն և ով ներկայ գրողներից այնքան կրաւոր կուէց իր գաղափարների համար: Ո՛վ քաղութեամբ կուէի է մղել ու յարձակման ենթարկվել այն ամենի համար, ինչ նա կեղծ ու անարդար էր ընդունում: Նա ով փառաւոր կերպով անկող հասարակութեան նախ սառն անտարբերութիւնը և ապա յամուռ ընդդիմադրութիւնը հրաւանք: Բայց կուէի ընտանեացաւ երկրի է տուում: Տարիներ կանցնեն մինչև երկուսուսորդ գրողը կը ճանաչվի: Ինչպէս նրա շատ նախորդները, նա էլ ծանր վիճակ է ունեցել:

«Վիլլ Զօլան ծնվել է Պարիզում 1840 թիւն ապրիլի 2-ին: Առաջնեկութիւնը նա անցկացրեց Էքսում: 1858-ին միայն նա կրկին Պարիզ դարձաւ: Այստեղ նա վերջացրեց իր ռուսումը, քննութեան միջոցին կտրվելով սկսում է մեծ կուէի մղել կեանքի դէմ: Այդ մի դժուր կուէի էր: «Rougon Macquart»-ի ապագայ հեղինակը երկու տարի շարունակ ապրում էր ձեռքից բերանով, քիչ էր ուտում, անդադար թափառում էր այս այն կողմ մի ֆրանկ ձեռք բերելու համար: Բնատուրանի տղն՝ նա յամախ այցելում էր փոխաւորութեան տունը, և այդ բոլորի հետ ոտամառները էր դրում, ոտամառներին, անհամ, անցող, անձն և անտախն, որոնք մեծ մասամբ վերջը իր բարեկամ Պատու Արքեպիսի ձեռքով հրատարակվեցին: Նա ինքն էր պատմում, որ մի ամբողջ ձմեռ գրեթէ բացառապէս հացով էր կերակրվել, որը թաթախում էր ձէլի մէջ: Ձէլը ծնունդին էին Էքսից ուղարկել: Նա այդ առիթով՝ նկատում էր փրկափայտական անտարբերութեամբ —

«Վանի դեռ մարդ ձէլ ունի, անօթութիւնից չի մեռնի»: — Այդ ժամանակ, տանիքի վրա դարան դնելով, երբեմն ձնադրվում էր որսում և մի վարակչորի լարին շարժած՝ կասկարայի վրա խորովում: Մի անգամ նա նոյն խոկ տոկոված էր մի ամբողջ շաբաթ տանը մնալ, որովհետեւ ըզգեստների վերջին կտորը դրաւ էր դրել: Այդ օրերին նրա ամբողջ զգեստը մի անկողնի ծածկոյն էր կապմունք: Նա սուղիկեան եղանակով այդ անուանում էր «արաբ դաւանար»: Իր առաջին գրքերից մէկում — «Լիդիոսի խոտովանար» — կան շատ մանրամասնութիւններ, որոնք խիստ անձնական տպւորութիւն են գործում, և որոնք յիշում մի հաւատարմի՝ նկարագիր կարող են տալ իր այն ժամանակվայ կեանքի: Վերջապէս նա իբրեւ պաշտօնեայ մասնում է Հաչէտի գրավաճառանոցը:

«Այդ օրից սկսած նրա գոյութիւնը ապահովված էր: Նա դադարում է ոտամառները դրել լույց (որոնք դատարի փրկափայտական դիտողութիւններ էին գերադրել առաքելաների մասին) և նուիրվում է արձակին: Նա ինքը յայտնում է, որ Ալեքսանդրեան չափով արտայայտած իր քնարերգական մեծ զգացմունքների արտաբերման ժամանակ դեռ «արաբ էր դաւանում», յաւախ տանջվելով իր ուժի մասին ունեցած կասկածներից: Բայց ամբողջովին երբէք չէր յուսահատվում: Ամենամեծ վնասութեան միջոցին մը խիթարում էր իրան յիշակ յանդուգն մարդով: — «Ի՞նչ կայ, եթէ մեծ բանաստեղծ չը դառնամ, դո՛ւք մի մեծ արձակագիր կը դառնամ»: — Անշուշտ այս հոգը հաւատի նշան էր, որ բըլ-

*) Գի դր Մօպսանի այս փորձը մի շարք թուած գեղանկերէն առաջին անգամ թարգմանված և ամէն բողոքութեամբ տրված է «Zukunft» շաբաթական թիւում, որից և քաղում ենք:

վիճակը, համեմատելով մնացած ազգաբնակչության հետ: Ինչի՞ համար է պետք ստեղծել գիւղական ժողովրդից մի առանձին աշխարհ, այն էլ առանձին և մասնաւոր իրաւունքներով ղեկավարվող աշխարհ: Եւ համար է օգտակար այդ, և կարող է օգտակար լինել գիւղացիներին: Գիւղացիները մինչև 1861 թ. փետրվարի 19-ը պետական օրէնքից դուրս էին ապրում: Միայն այդ օրը առաջին անգամ նրանց համար օրէնք ստեղծվեց, և միջով, 40 տարի անցնելուց յետոյ, այդ օրէնքը չը պետք է այժմ այն ձևը ստանայ, որ գիւղացիները ձուլվեն միւս դասակարգերի հետ և ղեկավարվեն ընդհանուր օրէնքներով և ոչ թէ սովորութիւններով: Հին կարգի կողմնակիցները աւելացնում են և այն, որ սովորութիւնները աւելի ձիւռն և դժբախտ են, քան օրէնսդրութիւնը: Երբեք: Ու՞մ յայտնի է, որ առանձնական սովորութիւնները, օրինակ, կնոջ և զաւակների վերաբերմամբ, աւելի անմարդասէր, խիտ և կոպիտ են, քան օրէնքը, որը պաշտպանում է կնոջը ամուսնութեան կապով, իսկ զաւակներին՝ ծնողների կամայականութեան դէմ: Մասնաւոր մեր երկրի պէս անկաշտութեան կեանքի սովորութիւնները և բարքերը մէջ տեսնել բարոյական բարձր սկզբունքների արտայայտութիւն, այդ կը նշանակի աչքը խնդրել և չը տեսնել իրողութիւնը, չը տեսնել այդ կեանքի տեղը արտայայտութիւնները: Կեանքը սիրում է միշտ վերանորոգութիւն, թարմութիւն, իսկ սովորութիւններից դաւերի փոշու հետ է փռում: Սովորութիւնները կարող են նկատուողութեան առնվել օրէնքներ հաստատելու և մշակելու, և դիւրական կեանքը անհրաժեշտ պետք ունի որոշ և հաստատ օրէնքներով: Գիւղացիները պետութեան նոյն քաղաքացիներն են, ինչպէս որ միւս դասակարգերը. ուրեմն տուէք նրանց քաղաքացիական բոլոր իրաւունքները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

(Բազում խմբի առաջին ներկայացումը)

Բազում դրամատիկական խումբը Թիֆլիսում իր ներկայացումները սկսեց փետրվարի 24-ին «Աղբիւն Լըվուրեթ» դրամայով, որ նոյն խումբը ներկայացրել է Բաբում փետրվարի 7-ին ի նպատակ տրիկին Սերանոյի: «Մշակ» աշխատակից պ. Ս. իր Բազումը դրած թատրոնական ընդամասնութեան մէջ («Մշակ», № 22) արդէն ըստ արժանի գնահատել է այդ պիէսին: Մենք միանգամայն համաձայն ենք պ. Ս-ի հետ, բայց մի կէտից:—Մեր կարծիքով, Սերանոյ և Լըվուրեթի դրաման կարող է որոշ տեսակ տաղանդներին ներդրել հանդիսատեսների վրա: Սարա Բերնարը, օրինակ, հրաշալի է Լըվուրեթի դերում և այդ ոչ միայն այն պատճառով, որ նա

հանձարեղ դերասանուհի է, այլ և այն պատճառով, որ այդ դերը միանգամայն համապատասխանում է նրա տաղանդի առանձնապատկութիւններին: Մենք այդ աշխարհահռչակ դերասանուհուն տեսել ենք վեց պիէսայում և նա նրանցից մի քանիսում թող, իսկ մէկում—(Բարբիէի փոխադրած, այսինքն աղաւաղած «Սերանոյ» մէջ) նոյն իսկ անտանելի տպաւորութիւն է գործել ներկայ եղող ռուս հասարակութեան մի ստորադաս մասի և ի միջի այլոց, մեզ վրա: Պարզ է, որ նոյն իսկ հանձարեղ դերասանուհին չէ կարող հաւասար աշխուժեամբ խաղալ ամեն տեսակ դեր: Մենք առաջին անգամ ենք տեսնում տրիկին Սերանոյին բեմի վրա, և թող չենք տալիս մեզ այժմ վճռական կերպով խօսել նրա տաղանդի չափի և տեսակի մասին, բայց մեզ թւում է, որ այդ տաղանդին աւելի համապատասխան են այնպիսի դերեր, ինչպէս Լեդի Մակբէթ «Մակբէթ» մէջ և Նիկոլայեթ թագուհին «Մարիա Ստուարտ» մէջ, քան Աղբիւն Լըվուրեթի և Ժանն դ'Արկի նման դերեր: Յամենայն դէպս, պետք է հաւատենք, որ տրիկին Սերանոյ զօրեղ տպաւորութիւն չէ գործում Աղբիւն Լըվուրեթի դերի մէջ, չը նայելով մի քանի աշուղտաւոր մոմենտներին 3-րդ և 4-րդ գործողութեան մէջ և խոր մտածված ու վերին աստիճանի արտապատկան խաղին ամբողջ 5-րդ գործողութեան մէջ: Մենք այդ վերագրում ենք նրան, որ յարգելի դերասանուհին չէ կարողանում սէր ներշնչել հանդիսատեսներին դէպի Լըվուրեթի տիպը, հետաքրքրեցնել նրան այդ տիպով, իսկ այդ բացատրում է ոչ միայն պիէսայի պակասութիւններով, այլ և նրանով, որ յարգելի տրիկինը դժգոյն և մի քիչ կեղծ կերպով է արտայայտում ընդդէմ և վաճառ գրացմունքները, մի բան, որ ինքն ըստ ինքեան էլ մեծ նշանակութիւն ունի առհասարակ և մասնաւոր Աղբիւն Լըվուրեթի դերում, որովհետեւ 18-րդ դարի սկզբի այդ հռչակաւոր դերասանուհին յայտնի էր ինչի նրանով, որ ամենազօրեղ զգացմունքները արտայայտում էր ամենապարզ և ամենաբնական կերպով, ինչպէս այդ երևում է և պիէսի գործող անձնատարութիւնների խօսքերից: Թուրքանի մասին, որ այդ օրը նոյնպէս մեծ դեր ունէր և որին մենք նոյնպէս առաջին անգամ ենք տեսնում բեմի վրա, առ այժմ զգուշաւոր ենք խօսել, մինչև որ երկրորդ անգամ տեսնենք նրան մի ուրիշ դերում: Անամբըլը ընդհանրապէս լատ էր, ինչպէս և պետք էր սպասել, որովհետեւ խումբը շատ հարուստ չը լինելով տաղանդներով, կարգված է այնուամենայնիւ մեր ամենալաւ ոյժերից: Զարմանալի է միայն այն, որ Թիֆլիսի հասարակութիւնը այնքան անարդիւր էր գտնվել, որ թատրոնը կիսով չափ էր միայն լի: Նրանակի վատութիւնն էլ այդ բանում: Նշանակութիւն ունէր ի հարկէ, բայց զիստօրը անշուշտ մեր ունեւոր հասարակութեան մեծամասնութեան անկրթութիւնն է և միտաւոր—բարոյական խտրեանքներից զուրկ լինելը: S. Յ.

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Փետրվարի 24-ին

Վերակի օր, փետրվարի 22-ին, սիրողները

բողի հետ համեմատել նրա բարեկամն ու ընկերը անուանել և իր գրքերը իր կեղտոտ ջրեր վաղող առուներ ցոյց տալ: Մի այդպիսի անամբըլութիւն, ի հարկէ, իր ճանապարհից չէ խոտոբեցնում նրան, որը իր ոյժ ու հանձարը մեծութիւնը գտնւ է: Բայց որտեղից է գալիս այդ թշնամութիւնը: Սա շատ պատճառներ ունի: Ամենից առաջ դա արդիւնք է այն մարդկանց բարկութեան, որոնք իրանց մտաւոր փառքի վերաբերութեամբ յուսահատուած են և իրանց քշանաչափներին յանկարծ մի այլ ուղղութիւն պէտք տան: Յետոյ յայտնի տեսակի ընկերների նախանձիք, և ուրիշների թշնամութիւնը, որոնց նա իր բանակութեամբ ջանքախնէ է: Եւ վերջապէս դիմակաւորել եղած կեղծաւորութեան սրտմտութիւնը: Որովհետեւ նա առանց քաջիւրում մարդկանց երեսներով է տուել նկատած ձևամոլութիւններն ու առաքելութեան դիմակի տակ թողնված միջոցութիւնները: Բայց կեղծաւորութիւնը մեզ մօտ այնքան է արմատացել, որ մարդ աւելի շուտ ամեն բան թող կը տայ, քան անկեղծութիւնը: Զօրա մեծ էնկերպայով իրան սեփականացրել է ամեն բան, ինչ իւրաքանչիւր անուր է, ասելու և պատմելու իրաւունքը: Ընդհանուր կոմպլիկատ նա չէ չլիթվել, և այդ կոմպլիկատ երբեք չէ մասնակցել: Նա աղաղակում է—«Բնիկ, պէ՛տք է կեղծել, չէ որ ոչ դի չէ կարել խաբել: Ծանաչվում է ձեր դէմքը: Ինչ դիմակ էլ որ ցանկանաք գործ ածել: Առաջը իբր թէ հաւատում էք բոլորին, ժպտում էք խորամանկ կերպով, կարծես կամենում էիք ասել—

խումբը տուեց իր երկրորդ ներկայացումը այս ձևով: Եւ ընկերները: Աղբիւնը յատկապէս էր չքաւոր հայ ուսանողների օգտին: Թաղացի «Արարաթի» աստղաղէտը: Շնորհիւ թատերասերների եռանդուն ջանքերի՝ ներկայացումը անցաւ ամենայն աշխուժեամբ, իսկ ներկայացման նպատակը գրաւել էր բազմաթիւ հասարակութիւն: Զուտ արդիւնքը, ինչպէս ասում են, 400 բուրջուց աւելի է. այդ գումարը կարգադրելները շուտով կը հասցնեն ուսանողներին:

Հաղիւ դադարել էին «Քաջանայական հարցի» առիթով բարձրացրած արդուները, և ահա կրկին սկսեցին լսվել չիթիներով լուրեր: Թէ և Վաթիկիսի տուած կոնգրակց յետոյ՝ բոլորը արդէն փակված էին համարում այդ խնդիրը, սակայն այս օրերն էլ ոմանք խօսում են, թէ Խուցեան քաջանան Թիֆլիսի առաջնորդի կողմից արտօնվելու է Բաթում գալու, և նա ստանալու է նոյն իսկ կաթողիկոսական կոնգրակց: Փոքր ինչ անհաւատալի է, բայց ինչ ասէք, որ այժմ չէ պատահում մեզ մօտ... Յ. Բ.

ՆԱՄԱԿ ՆԵՐ ԽՄԱԳՐՈՒԹԱՆ

Մօզոկ, փետրվարի 20-ին

Ստորագրողները՝ սրտանց չորսաւորում ենք արժանաշխատակ մեծ խմբակի Գրիգոր Արծրունու «Մշակ» լրագրի 25-ամեակը և նրա ամենօրեայ հրատարակութիւնը, ցանկանում ենք հայ գրականութեան ամենազօրեղի անդամատնին յարատեւ բարգաւաճում: Թող յաւէտ ապրի ժողովրդի իրաւունքների մեծ պաշտպան «Մշակը», թող ապրեն նաև այդ անդամատնը մշակող ժրջան մշակները:

Գեորգ քաջանայ Զաքարեանց, Խորեն քաջանայ Շահինեան, Գեորգ Բաղդասարեան, Վահան Թաւարեղեան, Առաքել Արեւիկեանց, Գրիգոր Լիսիցեանց, Ստեփանոս Մէլքոնեանց, Գեորգ Լիսիցեանց, Մկրտիչ Յովհաննէսեանց, Միքայէլ Յովհաննէսեանց, Աստուածատուր Մեղրեանց, Կարապետ Զէյրիկեանց, Խաչատուր Նարախանց, Պօղոս Գուրգէնեղեանց:

Բալասանի, փետրվարի 19-ին

Շնորհաւորելով «Մշակ» 25-ամեակը և ամենօրեայ հրատարակութիւնը, միացնում ենք մեր անկեղծ բարեմաղթութիւնները նրանց հետ, որոնք յարգում են «Մշակը»: Թող շատ քաջանայական անակներ բոլորէ «Մշակը» հայոց մտաւոր անդամատնի վրա, թող յաւէտ փայլէ նա՝ ամենօրեայ ամեն կողմ բարի և զեղեցիկ սերմերը: «Մշակ» ղեկավարներին ոյժ, անդուլթիւն և եռանդ՝ անշեղ և աներկիւղ առաջ տանելու աշխուղ գործը անմահ հիմնարկի վեհ գաղափարներով:

Ա. Ստեփանեանց, Գ. Աստուածատուր, Ս. Իւրաքանչեանց-Գեորգեան, Հ. Գեորգեանց, Ն. Ստեփանեանց, Գ. Մեհրաբեանց, Գ. Գուրգէնեանց, Յ. Աստուածատուրեանց, Մ. Իւրաքանչեանց, Գ. Ստեփանեանց:

Թիֆլիս, փետրվարի 24-ին

Դաւաւաջի հայ երիտասարդներ՝ չորսաւորում ենք «Մշակ» 25-ամեակը և ամենօրեայ հրատարակութիւնը: Յանկանում ենք ի սրտէ ոյժ և եռանդ, որ նա կարողանայ առանց արգելքի՝ առաջ տանել այն դրօշակը, որի ձակարկին գրված է «Մշակ» քաղցր խօսքը: Կեցցէ Արծրունու յիշատակը և նրա հիմնած «Մշակը»:

Նիկի Մէլքիեանց, Սարգիս Բախեանց, Կարապետ Կարապետեանց, Աղեքսանդր Տէր-Յովհաննէսեանց:

«Արդէն ամեն բան գիտէ»: Դուք փոփոխում էք իւրաքանչեւ սկանդալների պատմութիւններ, կանանց առանձնատեսներին անցկացրած ձեր ժամերը և ձեր կեանքի ճշգրիտ կեղտոտ պատմութիւնները: Բայց երբ մէկը քաջութիւն ունի այս ամեն բացառական տաղու, և հանդարտ, բայց անյողողող ու անտարբեր բոլոր այս տրիսմար գաղափարները աշխարհին յայտնելու, այն ժամանակ աղաղակ է բարձրացնում, այն ժամանակ բարկանում են: Մեծաշինները*) դառնում են պարկեշտ, Ռօբերտ Մաքսիները**): զիմառու: Կեն, դէմ կը դնեմ ձեզ, և պիտի ապացուցանեմ իմ քաջութիւնը»:

Նա ապացուցեց այս: Նրա կատաղած թշնամիները ամեն մի առիթով յարձակվում են նրա վրա, և կուտում ամեն տեսակ զինքներով, բայց նա դիմադրում է ինչպէս վարդը: Նրա կնիքի ճարտարածները հռչակված են. եթէ ինքն էլ մի քանի կնիքի ճարտարածներ ստացել է ու վիրաւորվել, բայց նա կարող է իր միջնորդութիւնը նրա մէջ գտնել, որ դարձել է աշխարհի ամենալաւ յայտնի գրողը: Եւ փոքր, որից մի ժամանակ այնպէս ցաւալի կերպով զրկված էր, այսօր հոտում է դէպի նա»:

Յետոյ Մօզաւսանց երկար և հետաքրքիր տեղեկութիւն տալով այդ մեծ գրողի և մարդու անձնատարութեան, վարած կեանքի եղանակի մասին:

*) Մեծաշինը՝ Հռոմեացիների Կլաւդիոս կայսրի կինը, որ հռչակված է իր անառակութեամբ և անգթութեամբ: ***) Պրոմէթէոսն ասպետ Օրբի դը Մանիքէի սպանողը:

Թիֆլիս, փետրվարի 24-ին

Շառապելով միայն դեղարուեստին և միանգամայն հեռու լինելով խմբագրութիւնների մէջ եղած զանազան տարաձայնութիւններից ու հաշիւներից, ես, ոչ իբրեւ «Աղբիւր» և «Ճարագի» աշխատակից, այլ իբրեւ անմահ Գրիգոր Արծրունու յիշատակը յարգող և անկեղծ բարեկամ նրա հիմնադրած «Մշակին», չնորհաւորում եմ նրա ամենօրեայ դառնալը և ցանկանում եմ նրան յարատուութիւն: Կեցցէ «Մշակը»:

Յարութիւն Թումանեանց

Արգիշ, փետրվարի 20-ին

Անպատմելի ուրախութեամբ ողջունում ենք պաշտելի «Մշակ» ամենօրեայ դառնալը, և ցանկանում ենք տեսնել նրան օրական երկու անգամ: Շնորհաւորում ենք «Մշակ» 25-ամեակը, սրտով ուրախ ենք և ցանկանում ենք շատ քան և հիւսնամանքներ բոլորել—թող նա զօրանայ, աւելի և աւելի բարձրէ երիտասարդութեան թարմ ոյժերը, և թող ծածանի «Մշակի» դրօշակը նրա անընկճելի գաղափարների վրա: Կեցցէ «Մշակը»:

Աղեքսանդր քաջանայ Յովսէփեանց, ռուսացի Քալէստ Գեորգեանց, Յակովբ Դաւեան, Ռուսացի Համազասպ Յովսէփեանց, Ռուսացի Սարգիս Քոթանեան, Մարտիրոս քաջանայ Կրակոսեան, Ստեփան Ներակունի, Յովհաննէս Մովսէսեանց, Յովհաննէս Վարդանեանց, Արամ Ռուսեանց, Սահակ Տէր-Սահակեանց, Բարսեղ Մովսէսեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ժողովրդական լուսաւորութեան նոր միջոցարար Բօգոլեպօլ, ինչպէս հարգուում է «НОВОЕ ВРЕМЯ» լրագրի, միջնորդութեան պաշտօնականներին ընդունելիս, ի միջի այլոց, ասեց Նեոսեանը. «Ռուստովնում եմ, որ ժողովրդական լուսաւորութեան բոլոր շրջաններում կեանքն առաջ է բերել կատարելագործութիւնների և նորմալութիւնների պահանջը: Բայց ես այն կարծիքի եմ, որ թէ կատարելագործութիւնը և թէ նորմալութիւնը պէտք է անել մեծ գրողների և յարգողների: Ես արագ և արմատական փոփոխութեան կողմնակից չեմ»:

«Մշակ» 25-ամեակի առիթով Աստրախանից ստացած 120 բուրջով, որ դրված էր խմբագրութեան տրամադրութեան տակ, մենք որոշեցինք «Մշակ» ուղարկել հետեւեղ տեղերը: 1) Աստրախանի հայոց օրիորդաց դպրոցին: 2) Տաթևի վանքին: 3) Սպանիի «Բաֆի» ընկերութեան: 4) Թիֆլիսի ռուսաց էմանսիպէ գրադարանին: 5) Շուշու գաւառի Փիլիպպի դիւլին: 6) Կարսի շրջանի Մարտիան դիւլի հայ հասարակութեան: 7) Մերթի մի խումբ հայ քաղաքականներին: 8) Գեօրգեայ գաւառի Սուրբ-Քէնդ դիւլի քանկիչներին: 9) Վրացասոս Սալիսի դիւլի հասարակութեան: 10) Բաղդադ քաղաքի «Աղեքսանդեան ընկերութեան»: 11) Լօզանի «Արմէն» ընկերութեան: 12) Ամարասի հայոց վանքին:

«Մշակ» 25-ամեակի առիթով պ. Դանաթ Տէր-Մարգարեանից ստացած 20 բուրջով, որ դրել էր մեր տրամադրութեան տակ, որոշեցինք ուղարկել 1898 թիւ «Մշակ» երկու օրինակ: 1) Կիպրոս կղզու պանդոկտոս հայերին և 2) Ի-

սին, վաղում է իր նկարագրի հետեւեղ խօսքերով, որոնք կարծես մարգարեական ճշգրիտ ապրեն ներշնչված: «Լրագրական գործունէութիւնը թւում է թէ ձուլ դադարեցրել է, բայց նրա բաժանումով առօրեայ կուլից՝ չը պէտք է վերջապէս համարել: Մենք տեսնելու ենք, թէ նա ինչպէս առաջին ամենալաւ առիթից օգտվելով իր գաղափարները արժարեւելու է կրկին մասնով մէջ և պաշտպանելու նրա էջերում: Որովհետեւ նա մի ուղղակի է և ոչ մի ժամանակ առանց կուլի չէ կարող ապրել»:

Սյոսր քաղաքակրթութ մարդկութիւնը վկայ է մարդարեւութեան այս ճշգրիտ կատարման: Մօնոսո զբօսալիքում կանգնած Մօզաւսանի մշտաւրու արձանը արդեօք լսեց «կեցցէ բանակը» «անկցի Զօր» շատ բան ասող անմոռաց աղաղակները...

Զօրան յաղթվեց, ուրիշ կերպ էլ դժուար էր յուսալ... Բայց նա իր պարտութեան մէջ իսկ անմահացաւ: Թերմօպլիէի սպարապետ կողմնակիցն ու նրանց յիշատակին նուիրված յիշատակարանն է մարդ յիշում: Զօրայի դատապարտութեան հետ Պրանսիայի սրտի կենտրոնում նրա բարոյական յաղթանակի անկողման, թէ և աներկիւղ կողմով կանգնվեց, որի վրա պիտի կարգան սերունդները—«Այստեղ դատապարտվեց Զօրան, հայրենիք պատրիւն ու ոտնահարված արդարութիւնը պաշտպանելու համար»:

Արամ Զարգ

Լայպցեհ

5—5